Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ԷԱՃԱՊՁԲ-2022/16-18-ԵՊԲՀ »* ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԷԱՃԱՊՁԲ-2022/16-18-ԵՊԲՀ-2

ք. Երևան ____/_____/2022թ.

« Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ »-ը ի դեմս Արմեն Աբգարի Մուրադյան ի, որը գործում է « Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « Փայլակ Թևանյան Հակոբի »-ը, ի դեմս տնօրեն Փայլակ Թևանյան ի, որը գործում է « Փայլակ Թևանյան Հակոբի »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։ Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով։

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները

խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը։

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները։

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը։

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով։

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք։

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝

պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 11622600.00 AMD(տասնմեկ միլիոն վեց հարյուր քսաներկու հազար վեց հարյուրդրամ) ՀՀ դրամ :629[1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը։

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը։

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին։ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են

ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

-

4. **ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 360 օրացուցային օրը (կիրառելի է 1,3-15, 18, 23-26) չափաբաժինների համար, առնվազն 730 օրացուցային օրը (կիրառելի է 2 չափաբաժնի համար): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները

8 31[3]

5. **ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի

պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9] 3[4]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ։

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

* *Պայմանագրի կատարման փուլում առաջացող՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա հարկերը (ավելացված արժեքի հարկ, ակցիզային*

*հարկ, բնապահպանական հարկ և այլն) հաշվանցվում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում Վաճառողին վճարման ենթակա գումարից (պարբերությունը կիրառվում է, եթե կնքվելիք պայմանագրի կողմը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ): *Մասնակցի կողմից հայտով միևնույն ապրանքի համար մեկից ավել ապրանքային նշան, կամ մոդել ներկայացնելու դեպքում, պայմանագրի կատարման փուլում, պայմանագրով սահմանված ողջ խմբաքանակի համար ապրանքի միանվագ և (կամ) փուլային մատակարարումը իրականացվելու է պայմանագրով սահմանված ապրանքային նշաններից կամ մոդելներից միայն մեկով՝ ըստ մատակարարի ընտրության: __* [5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի

արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են։

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա։ Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը։

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը,

պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

—

13[8]

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ

ք. Երևան, Կորյունի 2

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

11500166513800

01503448

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2022.03.30 12:37:05 AMST

/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ

Փայլակ Թևանյան Հակոբի

Երևան Գյուլիքևխյան 23 փողոց, բնակարան39

ԱՅ ԴԻ Բանկ

11808027132300

26590795

Digitally signed by SAFARYAN ARAMAYIS 3414840332
Date: 2022.03.29 22:28:12 AMT

/ստորագրություն/

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։

[1]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2]30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3]31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[4]9 *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5]10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6]11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7]12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8]13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2022/16-18-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը*	տեխնիկական բնութագիրը
4	39151230/4	4 Գազաբալոնների պահպանման պահարան-համակարգ	ՓԹ, Փայլակ Թևանյան	Պահարան-համակարգը հրակայուն է 50°C-ից բարձր ջերմաստիճանի դեպքում 90 րոպեների ընթացքում, ներկառուցված 2 հատ դարակներ մանոմետրի և ֆիթինգների տեղադրման համար, 50/10 լ ծավալով 2/4 հատ բալոնների համար նախատեսված, պատրաստված է պողպատի շերտից, բացվող դռները ծածկված են փոշի ներկով կարմիր, գույնի տեսակը՝ RAL 3003 , հիմնական կարկասը բաց մոխրագույն, գույնի տեսակը՝ RAL 7035, բալոնների ֆիքսում հատուկ ամրագոտիներով, բալոնների բռնիչ, տեխնոլոգիական անցքեր

				պահարանի առաստաղում, 2 ֆլանեց պահարանի օդափոխության համար 100 մմ տրամագծով, միացնող մուֆտա 75 մմ տրամագծով, պատվանդան բալոնների գլորման համար, ներքին չափսեր՝ LxխxԲ 730x404x1826 մմ ±5%, չափսեր՝ LxխxԲ 895x610x2070 մմ ±5%։ Ապրանքի արժեքը ներառում է նաև կահույքի հավաքման և տեղադրման ծառայությունը։ Երաշխիքային ժամկետ առնվազն 1 տարի:Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն
5	39121200/11	5 Կշեռքի սեղան 2	ՓԹ, Փայլակ Թևանյան	Երկարություն՝ 1200 մմ ±5%, Խորություն՝ 650 մմ ±5%, Բարձրություն՝ 750 մմ ±5%, սեղանի ծածկույթ՝ լամինատ, մոխագույն եզրագիծ, հավաքվող-քանդվող կարկաս, պատրաստված մետաղական պրոֆիլից ուղղանկյուն կտրվածքով ներկված փոշի ներկով, գույնի տեսակը՝ RAL 7035, շագրենային կաշվի ֆակտուրայով։ Ներկառուցված սեղան. չափսեր՝ 600*400*750 մմ ±5%, սեղանի ծածկույթ՝ հղկված գրանիտ 60 մմ ±5% հաստությամբ, պատրաստված մետաղական պրոֆիլից ուղանկյուն կտրվածքով ներկված փոշի ներկով, գույնի տեսակը՝ RAL 7035, շագրենային կաշվի ֆակտուրայով, կարգավորվող հենարանների վրա։ Ապրանքի արժեքը ներառում է նաև կահույքի հավաքման և տեղադրման ծառայությունը։ Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի:Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն
6	39121200/12	6 Շարժական սեղան անիվներով	ՓԹ, Փայլակ Թևանյան	Շարժական սեղան, երկարություն՝ 1200մմ ±5%, խորություն՝ 600մմ ±5%, բարձրություն՝ 750մմ ±5%։ Հավաքածու՝ սեղանի ծածկույթ՝ TRESPA TopLabPlus տեսակի 16մմ, մետաղական դարակ գետնից 250մմ հեռավորության վրա, կարկաս, պատրաստված մետաղական պրոֆիլից ուղղանկյուն կտրվածքով

				ներկված փոշի ներկով, գույնի տեսակը՝ RAL 7035 , շագրենային կաշվի ֆակտուրայով: Մեկ հատ պոլիպրոպիլենային կյուվետ, հենարանները 4 հատ անիվներով, բարձրությունը՝ 100 մմ, երկու հատ արգելակիչով, երկուսը՝ առանց: Ապրանքի արժեքը ներառում է նաև կահույքի հավաքման և տեղադրման ծառայությունը: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի:Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն
7	39121200/13	7 Լաբորատոր հարպատային սեղան	ՓԹ, Փայլակ Թևանյան	Հարպատային սեղան ամբողջական ծածկով՝ TRESPA TopLAb Plus տեսակի 16 մմ, երկարություն՝ 1500 մմ ±5%, խորություն՝ 800մմ ±5%, բարձրություն՝ 900մմ ±5%: Բազային հավաքակազմ. հիմք՝ հավաքվող-քանդվող կարկաս, պատրաստված պողպատյա պրոֆիլից ուղղանկյուն կտրվածքով, ներկված փոշի ներկով, գույնի տեսակը՝ RAL 7035, շագրենային կաշվի ֆակտուրայով: Թաքցված ամրացման էլեմենտներ, Երկու հանվող էկրաններ հետևի հատվածում, գույնի տեսակը՝ (RAL 7035) և մեկ չհանվող, գույնի տեսակը՝ (RAL 5023): Հետին կողային տուփեր (կորոբներ): Կարգավորվող հենարաններ՝ 0-40 մմ: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի:Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն
8	39121200/14	8 Լաբորատոր սեղան 1	ՓԹ, Փայլակ Թևանյան	Լաբորատոր բարձր աշխատանքային սեղան: Սեղանի ծածկույթ՝ TRESPA TopLabPlus տեսակի 16 մմ: Սեղանի երկարությունը՝ 1500 մմ ±5%, խորությունը՝ 650 մմ ±5%, բարձրությունը՝ 900 մմ ±5%: Բազային հավաքակազմ. հիմք՝ հավաքվող-քանդվող կարկաս, պատրաստված պողպատյա պրոֆիլից ուղղանկյուն կտրվածքով ներկված փոշի ներկով, գույնի տեսակը՝ RAL 7035 շագրենային կաշվի ֆակտուրայով: Թաքցված ամրացման էլեմենտներ, Երկու

				հանվող էկրաններ հետևի հատվածում, գույնի տեսակը (RAL 7035) և մեկ չհանվող, գույնի տեսակը (RAL 5023)։ Կարգավորվող հենարաններ՝ 0-40 մմ։ Սեղանի հետ նախատեսվում է բացվող դռնով կախովի պահարանի հնարավորություն։ Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի։Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն
9	39121200/15	9 Լաբորատոր սեղան 2	ՓԹ, Փայլակ Թևանյան	Լաբորատոր բարձր աշխատանքային սեղան։ Սեղանի ծածկույթ՝ TRESPA TopLabPlus տեսակի 16 մմ։ Սեղանի երկարությունը՝ 1500 մմ ±5%, խորությունը՝ 650 մմ ±5%, բարձրությունը՝ 750 մմ ±5%։ Բազային հավաքակազմ. հիմք՝ հավաքվող-քանդվող կարկաս, պատրաստված պողպատյա պրոֆիլից ուղղանկյուն կտրվածքով ներկված փոշի ներկով, գույնի տեսակը՝ RAL 7035 շագրենային կաշվի ֆակտուրայով։ Թաքցված ամրացման էլեմենտներ, Երկու հանվող էկրաններ հետևի հատվածում, գույնի տեսակը (RAL 7035) և մեկ չհանվող, գույնի տեսակը (RAL 5023)։ Կարգավորվող հենարաններ՝ 0-40 մմ։ Սեղանի հետ նախատեսվում է բացվող դռնով կախովի պահարանի հնարավորություն։ Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի։Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն
10	39141100/3	10 Կախովի դարակ ջրի թորման սարքի համար	ՓԹ, Փայլակ Թևանյան	"Կախովի դարակ ջրի թորման սարքի համար/շշի համար։ Երկարություն՝ 440 մմ ±5%, խորություն՝ 420 մմ ±5%, բարձրություն՝ 350 մմ ±5%։ Հիմք՝ ամբողջությամբ եռակցված կարկաս, պատրաստված պողպատյա պրոֆիլից 20*20 մմ կտրվածքով, ներկված փոշի ներկով, գույնի տեսակը՝ RAL 7035 շագրենային կաշվի ֆակտուրայով։ Ծածկույթ՝ TRESPA SopLabPlus տեսակի 13 մմ, մոնոլիտ պլիտա պատրաստված գերբարձր սեղմամբ, քիմիապես կայուն պոլիուրետան-ակրիլային

				մակերեսով, մոխրագույն: Թույլատրելի ծանրաբեռնվածությունը սեղանի վրա՝ առավելագույն 30 կգ: Պատին ամրացնելու հնարավորությամբ: Հավաքածուի մեջ ներառվում է բետոնից կամ գիպսակարտոնից պատին ամրացնելու համար պարագաներ: Ապրանքի արժեքը ներառում է նաև կահույքի հավաքման և տեղադրման ծառայությունը: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի:Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն
11	39141100/4	11 Կախովի դարակ թորած ջրի շշի համար	ՓԹ, Փայլակ Թևանյան	Կախովի դարակ թորած ջրի շշի համար: Երկարություն՝ 350 մմ ±5%, խորություն՝ 320 մմ ±5%, բարձրություն՝ 330 մմ ±5%: Հիմք՝ ամբողջությամբ եռակցված կարկաս, պատրաստված պողպատյա պրոֆիլից 20*20 մմ կտրվածքով, ներկված փոշի ներկով, գույնի տեսակը՝ RAL 7035 շագրենային կաշվի ֆակտուրայով: Ծածկույթի տեսակը՝ TRESPA SopLabPlus 13 մմ, մոնոլիտ պլիտա պատրաստված գերբարձր սեղմամբ, քիմիապես կայուն պոլիուրետան-ակրիլային մակերեսով, մոխրագույն: Դեկորատիվ էկրան հետևի հատվածում TRESPA Athlon տեսակի 6 մմ: Թույլատրելի ծանրաբեռնվածությունը սեղանի վրա՝ առավելագույնը 30 կգ: Պատին ամրացնելու հնարավորությամբ: Հավաքածուի մեջ ներառվում է բետոնից կամ գիպսակարտոնից պատին ամրացնելու համար պարագաներ: Հնարավոր է ամրացնել միայն կղզյակային ստելաժներին, տեխնոլոգիական դարակներին և ЛАБ-PRO սերվիսային համակարգերին: Ապրանքի արժեքը ներառում է նաև կահույքի հավաքման և տեղադրման ծառայությունը: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի:Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն

12	39121200/16	12 Սեղան-լվացարան 1	ՓԹ, Փայլակ Թևանյան	Սեղան-լվացարան պոլիպրոպիլենային աշխատանքային մակերեսով: Երկարություն՝ 1200 մմ ±5%, խորություն՝ 650 մմ ±5% բարձրություն՝ 900 մմ ±5% Աշխատանքային մակերեսը պոլիպրոպիլենից հակաթափվող եզրով, լվացարանի ներքին չափսը՝ 400*400*300 մմ ±5%, լվացարանը օժտված է ջրի վարարումից պաշտպանող համակարգով ջրի մակարդակի մինչև 270 մմ բարձրացման դեպքում; առկա է պոլիպրոպիլենային խրոցակ ամրացված շղթայով; սեղան-լվացարանի հենքը՝ հենարանային մետաղական տումբա, պատրաստված պողպատից, ներկված փոշի ներկով, գույնի տեսակը՝ RAL 7035 շագրենային կաշվի ֆակտուրայով: Ֆասադ՝ լամինացված ՄԴՖ մոխրագույն 16 մմ հաստությամբ; առանց դարակների, առանց փականի: Հավաքածուի մեջ ներառվում է՝ մեկ հատ պոլիպպրոպիլենային կյուվետ 410*470 մմ չափսերի, սիֆոն, գոֆրոշլանգ, մեկ լաբորատոր խառնիչ, երկու ճկուն ներդիրներ 1200 մմ ±5% երկարությամբ: Թաքցված կարկավորվող հենարաններ՝ 0-40 մմ, կարգավորումն իրականացվում է տումբայի ներսից: Ապրանքի արժեքը ներառում է նաև կահույքի հավաքման և տեղադրման ծառայությունը: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի:Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն
13	39121200/17	13 Սեղան-լվացարան 2	ՓԹ, Փայլակ Թևանյան	Սեղան-լվացարան չժանգոտող պողպատից աշխատանքային մակերեսով: Երկարություն՝ 1200 մմ ±5%, խորություն՝ 650 մմ ±5%, բարձրություն՝ 900 մմ ±5%: Աշխատանքային մակերեսը չժանգոտող պողպատից AISI 304 տեսակի, լվացարանի ներքին չափսը՝ 500*400*300 մմ ±5%, սեղան-լվացարանի հենքը՝ հենարանային մետաղական տումբա, պատրաստված պողպատից, ներկված փոշի ներկով, գույնի տեսակը՝ RAL 7035

				շագրենային կաշվի ֆակտուրայով: Ֆասադ՝ լամինացված ՄԴՖ մոխրագույն 16 մմ հաստությամբ; առանց դարակների, առանց փականի: Հավաքածուի մեջ ներառվում է՝ մեկ հատ պոլիպպրոպիլենային կյուվետ 410*470 մմ ±5% չափսերի, սիֆոն, գոֆրոշլանգ, մեկ լաբորատոր խառնիչ, երկու ճկուն ներդիրներ 1200 մմ ±5% երկարությամբ: Թաքցված կարգավորվող հենարաններ՝ 0-40 մմ, կարգավորումն իրականացվում է տումբայի ներսից: Ապրանքի արժեքը ներառում է նաև կահույքի հավաքման և տեղադրման ծառայությունը: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի:Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն
14	39151230/5	14 Պահարան լաբորատոր ապակեղենի համար	ՓԹ, Փայլակ Թևանյան	"Պահարան լաբորատոր ապակեղենի համար ապակյա դռներով ալյումինե շրջանակով: Երկարություն 800մմ ±5%, Խորություն՝ 500 մմ ±5%, Բարձրություն՝ 1930 մմ ±5%: Կորպուս՝ մելամին ""մոխրագույն բյուրեղ"" կամ համարժեքը, ֆասադ՝ մգեցված ապակի ալյումինե շրջանակի մեջ, 4 բաժանում՝, վերևի 2 բաժանումների բարձրությունը՝ 680 մմ ±5%, ներքևի բաժանումների բարձրություն՝ 1080 մմ ±5%, 10 հատ դարակեր, երկու ներկառուցված, 8 հանվող: Կարկաս, պատրաստված մետաղական պրոֆիլից ուղղանկյուն կտրվածքով ներկված փոշի ներկով, գույնի տեսակը՝ RAL 7035 շագրենային կաշվի ֆակտուրայով, կարգավորվող հենարաններ: Ապրանքի արժեքը ներառում է նաև կահույքի հավաքման և տեղադրման ծառայությունը: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի:Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն
15	33191220/	15 Վիրահ	ՓԹ,	Կոմբինացված վիրահատական սեղան պատրաստված

	3	ատական սեղան-լվացարան	Փայլակ Թևանյան	չժանգոտող պողպատից SUS 304 տեսակի: Առկա է երկու շարժական դարակներ վիրահատական գործիքների պահպանման համար, երկու մեծ բաժանումներ բանալիներով փակվող դռներով: Սեղանը ամրացված է անիվների վրա: Չափսերը՝ 1300*700*850 մմ ±5%: Ապրանքի արժեքը ներառում է նաև կահույքի հավաքման և տեղադրման ծառայությունը: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի:Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն
16	34911120/3	16 Պնևմոնիկ սայլակ անիվների վրա գազաբալոնների տեղափոխման համար	ՓԹՓԹ, Փայլակ Թևանյան	Սայլակ անիվների վրա գազաբալոնների տեղափոխման համար: Բեռնվածության դիմադրություն՝ մինչև 200 կգ: Անիվների քանակ՝ 2 հատ +1, անիվների չափսեր՝ 2*400մմ, 1*125մմ ±10%, անիվների տեսակ՝ 2 պնևմատիկ, 1 կաղապարված ռեզին: Պլատֆորմայի չափսեր՝ 250*500 մմ ±5%: Նախատեսված է միաժամանակ երկու բալոնի տեղափոխման համար: Առկա են բալոնների ֆիքսման համար նախատեսված շղթաներ: Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն
17	34911120/4	17 Սայլակ անիվների վրա գազաբալոնների տեղափոխման համար	ՓԹ, Փայլակ Թևանյան	Սայլակ անիվների վրա, ծալվող: Ծանրություն տեղադրելու հարթակի չափսերը՝ 800*500*100 մմ ±5%, բռնակի առավելագույն բարձրությունը՝ 900 մմ, անիվների տրամագիծը՝ 100 մմ: Բեռնվածության դիմադրությունը՝ մինչև 200 կգ: Բռակը՝ ալյումինե, հարթակը՝ պոլիուրետանից, անիվները՝ թերմոպլաստիկ ռեզինից: 2 անիվները առանցքի շուրջ պտտվող, 2 անիվները՝ չպտտվող: Անիվներն ամրացված են մետաղական կրանշտեյներով: Սայլակի չափսերը աշխատանքային վիճակում՝ 80*52*87 մմ ±5%, ծալված վիճակում՝ 80*52*10 մմ ±5%:Ապրանքը նոր է, չօգտագործված, պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

11500166513800

01503448

Արմեն Աբգարի Մուրադյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2022.03.30 12:37:24 AMST

ՎԱՃԱՌՈՂ

Փայլակ Թևանյան Հակոբի

Հասցե՝ Երևան Գյուլիքևխյան 23 փողոց, բնակարան39

ԱՅ ԴԻ Բանկ

11808027132300

26590795

Փայլակ Թևանյան

Digitally signed by SAFARYAN ARAMAYIS 3414840332

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2022/16-18-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
4	հատ	2574000.00	2574000.00	1	ք. Երևան, Կորյուն 2 հասցեով:	1	Ապրանքների մատակարարումն իրականացվելու է միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50 օրացուցային օրվա ընթացքում,
5	հատ	297000.00	297000.00	1	ք. Երևան, Կորյուն 2 հասցեո	1	Ապրանքների մատակարարումն իրականացվելու է

							միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50 օրացուցային օրվա ընթացքում,
6	հատ	247500.00	495000.00	2	ք. Երևան, Կորյուն 2 հասցեով:	2	Ապրանքների մատակարարումն իրականացվելու է միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50 օրացուցային օրվա ընթացքում,
7	հատ	396000.00	1980000.00	5	ք. Երևան, Կորյուն 2 հասցեով:	5	Ապրանքների մատակարարումն իրականացվելու է միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50 օրացուցային օրվա

							ընթացքում,
8	հատ	326700.00	980100.00	3	ք. Երևան, Կորյուն 2 հասցեով:	3	Ապրանքների մատակարարումն իրականացվելու է միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50 օրացուցային օրվա ընթացքում,
9	հատ	306900.00	1227600.00	4	ք. Երևան, Կորյուն 2 հասցեով:	4	Ապրանքների մատակարարումն իրականացվելու է միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50 օրացուցային օրվա ընթացքում,
10	հատ	84150.00	252450.00	3	ք. Երևան, Կորյուն 2 հասցեով:	3	Ապրանքների մատակարարումն իրականացվելու է միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող

							պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50 օրացուցային օրվա ընթացքում,
11	հատ	94050.00	282150.00	3	ք. Երևան, Կորյուն 2 հասցեով:	3	Ապրանքների մատակարարումն իրականացվելու է միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50 օրացուցային օրվա ընթացքում,
12	հատ	594000.00	1188000.00	2	ք. Երևան, Կորյուն 2 հասցեով:	2	Ապրանքների մատակարարումն իրականացվելու է միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50 օրացուցային օրվա ընթացքում,
13	հատ	693000.00	1386000.00	2	ք. Երևան, Կորյուն 2 հասցեով:	2	Ապրանքների մատակարարումն

							իրականացվելու է միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50 օրացուցային օրվա ընթացքում,
14	հատ	316800.00	316800.00	1	ք. Երևան, Կորյուն 2 հասցեով:	1	Ապրանքների մատակարարումն իրականացվելու է միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50 օրացուցային օրվա ընթացքում,
15	հատ	396000.00	396000.00	1	ք. Երևան, Կորյուն 2 հասցեով:	1	Ապրանքների մատակարարումն իրականացվելու է միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50

							օրացուցային օրվա ընթացքում,
16	հատ	99000.00	99000.00	1	ք. Երևան, Կորյուն 2 հասցեով:	1	Ապրանքների մատակարարումն իրականացվելու է միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50 օրացուցային օրվա ընթացքում,
17	հատ	148500.00	148500.00	1	ք. Երևան, Կորյուն 2 հասցեով:	1	Ապրանքների մատակարարումն իրականացվելու է միանվագ 2022 թվականին կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝50 օրացուցային օրվա ընթացքում,

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ	**Փայլակ Թևանյան Հակոբի**
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2	**Հասցե՝ Երևան Գյուլիքևխյան 23 փողոց, բնակարան39**
Հայբիզնեսբանկ ՓԲԸ	**ԱՅ ԴԻ Բանկ**
11500166513800	**11808027132300**
01503448	**26590795**
Արմեն Աբգարի Մուրադյան	**Փայլակ Թևանյան**
Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078 Date: 2022.03.30 12:37:40 AMST	Digitally signed by SAFARYAN ARAMAYIS 3414840332
_____	**_____**
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

Հավելված N 3
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2022/16-18-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
4	39151230/4	4 Գազաբալոնների պահպանման պահարան-համակարգ				2574000.00	2574000.00	2574000.00	2574000.00	2574000.00	2574000.00	2574000.00	2574000.00	2574000.00	2574000.00
5	39121200/11	5 Կշեռքի սեղան 2				297000.00	297000.00	297000.00	297000.00	297000.00	297000.00	297000.00	297000.00	297000.00	297000.00
6	39121200/12	6 Շարժական				495000.00	495000.00	495000.00	495000.00	495000.00	495000.00	495000.00	495000.00	495000.00	495000.00

		սեղան անիվներով													
7	39121200/13	7 Լաբորատոր հարպատայի ն սեղան				1980000.00	1980000.00	1980000.00	1980000.00	1980000.00	1980000.00	1980000.00	1980000.00	1980000.00	1980000.00
8	39121200/14	8 Լաբորատոր սեղան 1				980100.00	980100.00	980100.00	980100.00	980100.00	980100.00	980100.00	980100.00	980100.00	980100.00
9	39121200/15	9 Լաբորատոր սեղան 2				1227600.00	1227600.00	1227600.00	1227600.00	1227600.00	1227600.00	1227600.00	1227600.00	1227600.00	1227600.00
10	39141100/3	10 Կախովի դարակ ջրի թորման սարքի համար				252450.00	252450.00	252450.00	252450.00	252450.00	252450.00	252450.00	252450.00	252450.00	252450.00
11	39141100/4	11 Կախովի դարակ թորած ջրի շշի համար				282150.00	282150.00	282150.00	282150.00	282150.00	282150.00	282150.00	282150.00	282150.00	282150.00
12	39121200/16	12 Սեղան-լվացարան 1				1188000.00	1188000.00	1188000.00	1188000.00	1188000.00	1188000.00	1188000.00	1188000.00	1188000.00	1188000.00
13	39121200/17	13 Սեղան-լվացարան 2				1386000.00	1386000.00	1386000.00	1386000.00	1386000.00	1386000.00	1386000.00	1386000.00	1386000.00	1386000.00
14	39151230/5	14 Պահարան լաբորատոր ապակեղենի				316800.00	316800.00	316800.00	316800.00	316800.00	316800.00	316800.00	316800.00	316800.00	316800.00

		համար													
15	33191220/3	15 Վիրահատական սեղան-լվացարան				396000.00	396000.00	396000.00	396000.00	396000.00	396000.00	396000.00	396000.00	396000.00	396000.00
16	34911120/3	16 Պնևմոնիկ սայլակ անիվների վրա գազաբալոնների տեղափոխման համար				99000.00	99000.00	99000.00	99000.00	99000.00	99000.00	99000.00	99000.00	99000.00	99000.00
17	34911120/4	17 Սայլակ անիվների վրա գազաբալոնների տեղափոխման համար				148500.00	148500.00	148500.00	148500.00	148500.00	148500.00	148500.00	148500.00	148500.00	148500.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
11500166513800

ՎԱՃԱՌՈՂ
Փայլակ Թևանյան Հակոբի
Հասցե՝ Երևան Գյուլիքևխյան 23 փողոց, բնակարան39
ԱՅ ԴԻ Բանկ
11808027132300
26590795

01503448

Արմեն Աբգարի Մուրադյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2022.03.30 12:38:01 AMST

Փայլակ Թևանյան

Digitally signed by SAFARYAN ARAMAYIS 3414840332

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 4
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2022/16-18-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ԷԱՃԱՊՁԲ-2022/16-18-ԵՊԲՀ-2
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
4	4 Գազաբալոնների							

	պահպանման պահարան-համակարգ							
5	5 Կշեռքի սեղան 2							
6	6 Շարժական սեղան անիվներով							
7	7 Լաբորատոր հարպատային սեղան							
8	8 Լաբորատոր սեղան 1							
9	9 Լաբորատոր սեղան 2							
10	10 Կախովի դարակ ջրի թորման սարքի համար							
11	11 Կախովի դարակ թորած ջրի շշի համար							
12	12 Սեղան-լվացարան 1							
13	13 Սեղան-լվացարան 2							
14	14 Պահարան լաբորատոր ապակեղենի համար							
15	15 Վիրահատական սեղան-լվացարան							
16	16 Պնևմոնիկ սայլակ անիվների վրա գազաբալոններ ի տեղափոխման համար							
17	17 Սայլակ անիվների վրա գազաբալոններ							

	րի տեղափոխման համար							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	**Ապրանքը ընդունեց**
_____	_____
ստորագրություն	**ստորագրություն**
_____	_____
ազգանուն, անուն	**ազգանուն, անուն**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 4.1
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2022/16-18-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ -ի (այսուհետ՝ Գնորդ) և Փայլակ Թևանյան Հակոբի (այսուհետ՝ Վաճառող)
միջև 20 թ._____ -ին կնքված N ԷԱՃԱՊՁԲ-2022/16-18-ԵՊԲՀ-2 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
4 Գազաբալոնների պահպանման պահարան-համակարգ	հատ	
5 Կշեռքի սեղան 2	հատ	
6 Շարժական սեղան անիվներով	հատ	
7 Լաբորատոր հարպատային սեղան	հատ	
8 Լաբորատոր սեղան 1	հատ	
9 Լաբորատոր սեղան 2	հատ	
10 Կախովի դարակ ջրի թորման սարքի համար	հատ	
11 Կախովի դարակ թորած ջրի շշի համար	հատ	
12 Սեղան-լվացարան 1	հատ	
13 Սեղան-լվացարան 2	հատ	
14 Պահարան լաբորատոր ապակեղենի համար	հատ	
15 Վիրահատական սեղան-լվացարան	հատ	
16 Պնևմոնիկ սայլակ անիվների վրա գազաբալոնների տեղափոխման համար	հատ	

17 Սայլակ անիվների վրա գազաբալոնների տեղափոխման համար	հատ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն